

Հանախակի տրվող հարցեր

Հ. Ի՞նչ է ELPAC-ի նպատակը

Պ. Կալիֆորնիայի կրթաշրջաններից պահանջվում է օրենքով՝ Անգլերենի իմացության բնութագրում (ELPAC) անցկացնել TK-ից 12-րդ դասարանների այն աշակերտներից, որոնց մայրենի լեզուն անգլերենն չէ:

Հ. Կարո՞ղ է ծնողը/խնամակալը հրաժարվել իր երեխայի ELPAC բնութագրման մասնակցությունից:

Պ. Ոչ: Ծնողը/խնամակալը չի կարող հրաժարվել իր երեխայի ELPAC բնութագրման մասնակցությունից: Նահանգային և դաշնային օրենքները պահանջում են բոլոր այն աշակերտներից, որոնց մայրենի լեզուն անգլերենն չէ, հանձնել Անգլերենի իմացության բնութագրում:

Հ. Ո՞ր աշակերտից է պահանջվում հանձնել ELPAC-ը:

Պ. ա) Այն աշակերտը ով, տան խոսակցական լեզվի հարցաշարի համաձայն, տանը խոսում է իր մայրենի լեզվով, և նա՝ ով մինչ այժմ չի հանձնել ELPAC-ը և նախկինում չի դասակարգվել որպես EL, պետք է հանձնի ELPAC-ի նախնական բնութագրումը (IA):

բ) ELPAC-ի (IA) միջոցով նանաչված EL աշակերտը, պարտավոր է ամեն տարի հանձնել ELPAC-ի Ամփոփիչ բնութագրումը (SA) մինչև որ նա կվերադասակարգվի որպես Անգլերենին տիրապետող:

Որտեղ կարող եմ ավելի շատ տեղեկություններ գտնել

ELPAC-ի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ կարելի է գտնել Կալիֆորնիայի կրթական բաժնի ELPAC-ի կայքէջում՝





<http://www.cde.ca.gov/ta/tg/ep>

կամ ELPAC-ի կրթական բնական ծառայությունների կայքէջում՝ <http://www.elpac.org/>

Ծնողները նույնպես խրախուսվում են կապվել իրենց երեխայի դպրոցի մասնագետ ուսուցչի հետ՝ իրենց երեխայի դպրոցում հատուկ բնութագրման տեղեկության ու ամսաթվերի համար:



Office of Categorical Programs
Glendale Unified School District
223 N. Jackson Street
Glendale Ca 91206
(818) 241-3111 Ext. 1457



Կալիֆորնիայի անգլերեն լեզվի իմացության գնահատումը (ELPAC) այն բնութագրումն է, որը չափում է, թե անցումային մանկապարտեզից մինչև տասներկուերորդ դասարանի աշակերտը որքան լավ է հասկանում և կարողանում է օգտագործել ուսումնական և խոսակցական լեզուն, երբ դա նրա մայրենի լեզուն չէ:



Ի՞նչ է ELPAC-ը

Կալիֆորնիայի Անգլերենի իմացության ֆննուքյունը (ELPAC) պարտադիր ֆննուքյուն է անգլերենի իմացության մակարդակը որոշելու համար (ELP): Դա պետք է հանձնի այն աշակերտը, որի մայրենի լեզուն անգլերեն չէ: Կալիֆորնիայի և դաշնային օրենքը պահանջում է, որ տեղական կրթական գործակալությունները ELP-ի ֆննուքյուն անցկացնեն անցումային մանկապարտեզից տասներկուերորդ դասարանների աշակերտներին:

Սկսած 2019-20 ուստարվա վարչակազմից, Կալիֆորնիայի անգլերենի իմացության ELPAC-ի ամփոփիչ գնահատումը, կկատարվի համակարգչի միջոցով: ELPAC-ի առկա վերապատրաստման և վարժության ֆննուքյունները՝ աշակերտներին, ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին ծանոթացնելու են համակարգչային ֆննակարգից, ինչպես նաև ֆննուքյան հարցերի տեսակներին, որոնք կարող են հայտնվել իրական ֆննուքյան ընթացքում՝ յուրաքանչյուր դասարանի մակարդակի համար:

ELPAC-ը նախագծվել է, որպեսզի աշակերտները, ներառյալ հատուկ կարիքներով աշակերտները, կարողանան մասնակցել ֆննուքյան և ցույց տալ, թե ինչ գիտեն և ինչ կարող են անել: ELPAC ֆննուքյան արդյունքները տեղեկություններ են տրամադրում տեսողական, լսողական և ֆիզիկական արգելիների մասին - թույլ տալով, որ բոլոր աշակերտները իրապես ցույց տան, թե ինչ գիտեն և ինչ կարող են անել:

Ի՞նչ է գնահատում ELPAC ֆննուքյունը

ELPAC-ը չորս ոլորտներում գնահատում է աշակերտի Անգլերենի իմացության մակարդակը: Այդ չորս ոլորտներն են՝

- Լսելը**
- Կարդալը**
- Խոսելը**
- Գրելը**

ELPAC-ը համապատասխանում է 2012 թ. Անգլերենի գարգացման Կալիֆորնիայի չափանիշներին և բաղկացած է երկու առանձին ֆննուքյուններից՝

I. Նախնական ELPAC

Ինչ՝ Նախնական ֆննուքյուն, որն օգտագործվում է բացահայտելու անգլերեն սովորող կամ անգլերենին տիրապետող աշակերտներին:

Ով՝ Այն աշակերտը, ում մայրենի լեզուն անգլերեն չէ, անցյալում չի հանձնել ELPAC ֆննուքյունը և չի դասակարգվել որպես անգլերեն սովորող:

Երբ՝ Աշակերտը Նախնական ֆննուքյունը հանձնում է դպրոցում գրանցվելուց 30 օրվա ընթացքում:

II. Ամփոփիչ ELPAC

Ինչ՝ Տարեկան ամփոփիչ ֆննուքյուն՝ անգլերեն սովորող աշակերտի առաջընթացը ստուգելու և Անգլերենի հմտության մակարդակը նախաշեղծելու համար:

Ով՝ Այն աշակերտը, ով նախնական ֆննուքյան ընթացքում նախաշեղծ է որպես Անգլերեն սովորող:

Երբ՝ Անգլերեն սովորող աշակերտը հանձնում է Ամփոփիչ ELPAC ֆննուքյունը ամեն գարնանը, Փետրվարից Մայիս ամիսներին, մինչև վերադասակարգվի որպես անգլերենին հմուտ աշակերտ:

Անհրաժեշտ է բացահայտել այն աշակերտներին, ովքեր օգնության կարիք ունեն անգլերենի մեջ, որպեսզի նրանք ստանան լրացուցիչ օգնություն՝ դպրոցում հաջողելու և ուսումնական ծրագրից լիովին օգտվելու համար: Ամեն տարի, Անգլերեն սովորող աշակերտները կհանձնեն Ամփոփիչ ֆննուքյուն՝ նրանց ուսումնական առաջընթացը գնահատելու համար:

Ինչպե՞ս կարող են ծնողները իրենց երեխային օգնել նախապատրաստվելու ELPAC-ի համար

Ծնողները իրենց երեխայի կրթության կարևոր մասն են կազմում: Կան որոշ բաներ, որոնք ծնողները կարող են անել իրենց երեխային օգնելու համար:

✓ Կարդացե՛ք ձեր երեխայի համար կամ թույլ տվե՛ք, որ ձեր երեխան ամեն օր անգլերենով կարդա ձեզ համար:

✓ Օգտագործե՛ք նկարներ և ձեր երեխայից ուզե՛ք անգլերենով ձեզ պատմի թե ինչ է նա տեսնում նկարում կամ ինչ է կատարվում նկարի մեջ:

✓ Խոսեցե՛ք ձեր երեխայի ուսուցչի հետ այն մասին, թե անգլերենի ուսուցման ո՞ր ոլորտում (լսել, խոսել, կարդալ, գրել) նա կարող է լրացուցիչ օգնության կարիք ունենալ:

✓ Քննարկե՛ք ֆննուքյունը ձեր երեխայի հետ և համոզվե՛ք, որ նա համագիտ է իրեն զգում և հասկանում է ELPAC ֆննուքյան կարևորությունը:

✓ Ձեր երեխայից ուզե՛ք, որ հանձնի ELPAC-ի վարժության ֆննուքյուն՝ ELPAC ֆննուքյան հարցերին ծանոթացնելու համար: Երբ աշակերտներն ավելի շատ են ծանոթանում, թե ինչ է ակնկալվում ֆննուքյան ընթացքում, նրանք ավելի լավ են նախապատրաստվում իրենց իմացածը ցույց տալու և անգլերենով հարցերին պատասխանելու:

ELPAC-ի վարժության ֆննուքյունը կարելի է գտնել՝

<https://www.elpac.org/resources/practicetests/>.

